

5525

Рѣчка Зумбелка

Зумбел

062

10-64

Рѣчка  
1908

Q 37  
K-32

Այս գիրքը պատկանում է...

Այր. **ՀԱՂԻԻ**



ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒ ՀԵՍՑ

„ՄԵՂՈՒ“

ԵԳԻՍՏԱՆԻԻ ՏԱՆ ԸՆԿ.

1906 թուի նոյեմբերից մինչև 1907 թ. վերջը

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

062  
P-64

ԹԻՖԼԻՍ  
Տպարան «ԷՊՕԽԱ» Գանձակայա փող.  
1908

2010

17399

069 (29/39)  
թ-64

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԾԱԳԵՑ «ՄԵՂՂԻ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

370  
2136-2Ա

«Նրեփիզ քրտինքով ուտես քո հացը»  
Ս. Գիրք-  
«Աշխատիր՝ ապրիր»  
Ժող. առած.

Այսպէս էր որոշում աւանդական պատգամը մարդկութեան ճակատագիրը, բայց այսօր այդ պատգամն այլևս չէ արդարանում իրականութեան մէջ—կուշտ հաց ուտողը քրտինքի կաթիլ էլ չէ թափում, իսկ արին քրտինքի մէջ կորած աշխատաւորը միշտ կիսաքաղց է: Աշխատանքի ճգնաժամը օրից օր զարգանալով տապալեց աւանդական պատգամը:

Սովի երկիւղ—անա մարդկութեան ամենազլխաւոր լծակը: Սովի երկիւղը սովորեցրեց հնում ցանել, արածացնել և որսալ, նոյն սովի երկիւղը պատճառ դարձաւ արդիւնաբերութեամբ, արհեստներով և առևտրով պտրապելուն: Սովի երկիւղն է ստիպում վայրենուն ուտել իր գաւակներին կամ կնոջը: Հին ժամանակ կուսակաշտ մարդկութիւնը ամաններով կերակուր էր դնում ամեն օր թագուած դիակների շուրջը, ինչպէս և ներկայումս դեռ պահպանում է հոգեհացի սովորութիւնը մեզ մօտ. ինչը զբողեց մարդկութեանը կասկածել, թէ մեռած մարդիկ էլ ուտելու կարիք ունեն, եթէ ոչ նոյն սովի երկիւղը:

Ապահովուել սովից կամ հարստանալ—նպատակ դը-

9 15424

րեց իրեն մարդկութիւնը և ներկայումս դա է գլխաւոր իդէալը, թէ վայրենու և թէ ամենաքաղաքակիրթ մարդու համար:

Կարիքները միշտ միևնոյն չեն մնում և բոլորի համար միատեսակ չեն. ինչ որ երէկ մեզ բաւականութիւն էր տալիս, այսօր քիչ է թւում, մարդկանց շրջահայեացքը լայնանում է, նա կատարելագործում է արդիւնաբերութիւնը, ծագկեցնում է գիտութիւնը և արհեստները, զարգացնում է մարդու կամքը և ուղղում է նորա բարքը. այժմ պարզ է, որ քաղաքակրթութիւնը հարստանալու իդէալից է ծնւում:

Հարստանալու ճանապարհը աշխատանքն էր և անա մարդիկ սկսում են քրտինք թափել:

Երկրագնդիս վրայ տեղ չէք գտնիլ, ուր հարստանալու համար աշխատանք չը պահանջուէր: Ժրաշան մեղուների նման գործի կպան մարդիկ և աշխատանքի ասպարէզը սկզբում լայն էր բոլորի համար: Բայց աշխատում էին մարդիկ գատ-գատ միմեանցից՝ պակասում էր նրանց արդարութեան և հաւասարութեան սկզբունքները: Աշխատաւորների մէջ էլ կային ուժեղներ և թոյլեր, կային և դիւմամբ վատ աշխատողներ՝ ծոյլեր, որոնք սկսեցին գողանալ ուրիշի քրտինքի արգիւնքը: Դարաւոր կռիւներն ու ընդհարումները, որոնցով լիքն է մարդկային պատմութիւնը, լրացրին և ստեղծեցին անհաւասարութիւն, ստրկութիւն և բռնակալութիւն: Հարուստ գասակարգը իր ձեռքերի մէջ հաւաքեց ամբողջ արդիւնաբերութիւնը, իսկ աղքատ գասակարգը սկսեց ծառայել հարուստներին: Բանւորի վարձն էլ քանի գնում նուազում է, իսկ մեքենաների գիւտից յետոյ բանւորների թիւն էլ կրճատւում է:

Աշխատանք փնտրողների թիւը քանի գնում շատանում է իսկ սովի երկիւղից բանւորը համաձայնում է աւելի արժան աշխատել:

Ստուարանում է աղքատների դասակարգը: Եւ հաշուով ապրողներին դուք կը պատահէք թէ Բտալիայի ջինջ երկնակամարի տակ և թէ Անգլիայի մառախլապատ կենտրոնում, թէ հասարակածի կիզիչ արևի տակ և թէ հիւսիսի սառնամանիքներում: Թափառում է այդ գատակարգը զանազան ձևերով և ապրում է ուրիշի հաշուով, թէ հարուստ ապարանքների պատերի տակ և թէ մեծ ճանապարհների վրայ:

Փոքա կարելի է երկու կարգի բաժանել՝ չարագործներ կամ աւազակներ և մուրացկաններ: Ինչպէս առաջինները, նոյնպէս և երկրորդները պեղեցիկ համեմատութիւններ են կազմում այն խղճալի միջատների հետ, որոնց մենք պարագիտներ ենք կոչում՝ ապրում են ուրիշ կենդանիների մարմնի վրայ և միայն ծանրութիւնն է հոգս են պատճառում: Կը լինեն առարկողներ՝ թէ խիտ է մեր համեմատութիւնը մուրացկանների վերաբերմամբ. ինչով է մեղաւոր անգործ բանւորը, որ մուրացկանութեան ցուպն է ձեռք առնում, բայց նոյնքան մեղաւոր է և չարագործը կամ աւազակը, որին մենք սառնասիրտ կերպով արսորում ենք կամ մահուան դատապարտում: Մուրացկանն իր ցնցոտիներով և մերկութեամբ նոյնն է անում ինչ որ աւազակը—մուրացկանութիւնն էլ մի արհեստ է, մի դիմակ, որով կարելի է առանց ոխակի խաղաղ կողոպտել:

Մուրացկանը ոչինչ չ'անելով հանդերձ, աւելի շատ է աշխատում, քան բանւորը օրական 10—12 ժամ բանելով: Թէ չարագործները և թէ մուրացկանները միատեսակ չարիք են, որ պէտք է ենթարկուին միատեսակ պատժի:

Բայց չը պէտք է մոռանալ, որ մուրացկանութիւնը հարուստ գասակարգի միջոցով մի տեսակ պահանջ է դարձել ընդհանուր մարդկութեան համար: Մուրացկանների

զատահում ենք թէ հին, թէ միջին և թէ նոր դարերում և ամեն ժամանակ էլ մարդ բաւականութիւն է ըզգում նրանց օգնելով: Հոսովէական դիցաբանութիւնը աղքատութիւնը համարում է աստուածների ժամանակակից մի երևոյթ: Պղատոնը թողել է մեզ հետեւալ բանաստեղծական աւանդութիւնը աղքատութեան ծագման մասին:

Աստուածների աստուած Իւպիտերը կամեցաւ արժանաւայել կերպով տօնել իր դստեր—գեղեցկութեան աստուածուհու—Վեներայի ծնունդը և Ոլիմպոսի գազաթին մեծ խնձոյք պատրաստուեց, ուր հրաւիրուած էին բոլոր աստուածներն ու աստուածուհիք: Մէկը միայն չէր մասնակցում խնձոյքին՝ աղքատութեան աստուածուհին, խեղճ, տխրադէմ, յոգնած, գլխահոր կանգնած էր նա Ոլիմպոսի տաճարի դրանը և համբերութեամբ սպառում էր ձօխ սեղանի փշրանքները: Այդ ժամանակ դուրս է գալիս տաճարից առատութեան աստուածն—Պարոսս լաւ կշտացած խնձոյքից: Հաստամարմին Պարոսսի աչքովն ընկաւ աղքատութեան աստուածուհին. նորան դուր եկաւ վերջինիս գեղեցիկ դէմքը, և իր մօտ կանչեց նրան: Ծանօթացաւ հետը, փաղաքշեց և երկուսի մէջ կապ հաստատուեցաւ. շուտով նորա մի գաւակ ունեցան այնպէս ամրակապմինչպէս հայրն էր և այնպէս մերկ ու աղքատ, որպէս մայրը: Սա էլ որդի ունեցաւ և առաջ եկան աղքատները երկրագնդիս վրայ:

Այս գողտրիկ, բանաստեղծական դիցաբանութեան տակ խորը միտք է թափնուած՝ մուրացկանութիւնը պայման դրեց բարեգործութեան հետ և առաջ եկան աղքատները: Նոյնն ենք տեսնում և այսօր, աղքատը շարժում է հարստի գութը, հարուստը բաւականութիւն է զգում նորան մի քանի կօպէկ տալով և աղքատութիւնն օրէցօր աճում է:

Այսպիսով, կը նշանակէ, որ մուրացկանութիւնը կեղծ

պահանջ է մարդկութեան զթասարտութեան և մուրացկաններին մատուցած բարեգործական օգնութիւնը ծառայում է իբրև իւր կրակի վրայ:

Իսկական բարեգործութիւնը կայանում է աղքատութիւնը արմատախիլ անելու մէջ: Բժշկութիւնը նորա համար չէ, որ միայն հիւանդներին բժշկէ, այլ որ առողջութիւնը պահպանելու և հիւանդութեան առաջն առնելու օրէնքները սովորեցնէ:

Վատ չէր լինիլ մուրացկաններին ազնիւ աշխատանքի ճանապարհը դարձնել, բայց այդ մեծ մասամբ չէ յաջողում. աւելի հեշտ է աշխատանքի շուկայից դուրս մընացածներին նորից գործի կանգնեցնել և թոյլ չը տալ նորան մուրացկանութեան դիմելու:

Վերջին երկու երեք տարուայ ծանր տնտեսական օրերում անգործների թիւը անցաւ չափ ու սահմանից: Ամենաազնիւ աշխատաւորները դատապարտուած էին շարագործութեան կամ մուրացկանութեան: Պէտք էր մի ոյժ, որ օգնէր նրանց յուսահատութեան բուպէին և քաջալերէր նրանց, և ահա հիմնուեց «Մեղու» ընկերութիւնը, նպատակ դնելով մի համեստ ծառայութիւն մատուցանել այդ ասպարիզում:

Իեռ հայ-թուրքական ընդհարումների ծանր օրերին Թիֆլիսի հայուհեաց թէև ոչ հարուստ, բայց ինտելիգենտ գասակարգի ներկայացուցիչների մի խումբ, համոզուած լինելով, որ գոյութիւն ունեցող բարեգործական ընկերութիւնները շնորհիւ հին, շաբլօնական «գործութիւն» բաժանելու ուղղութեան, անգոր են մաքառել տնտեսական ճգնաժամի հսկայական ոյժի դէմ, մտածեցին մի գուտ գէմօհրատական ընկերութիւն հիմնել, որը կարողանար առանց մարդուս ինքնասիրութիւնը վիրաւորելու, աշխատանքի ազնիւ ճանապարհով միջոց տալ մեր նիւթապաշտ գարի չարաբաղդ գոհերին—յատկապէս թոյլ կանանց սեռից—որ ըրչի հաշուով ապրելու փոխարէն, սեփական քրք-

տինքով վաստակելու օրական հացը: Անհատական մի քանի փորձերից յետոյ պարզուեց, որ հայ կին-աշխատուորը մի կողմից իր ամօթխածութեան, իսկ միւս կողմից ընդհանուր անտեսական ճգնաժամի շորհիւ, ամենահարստահարուած, կեղեքուած և շահագործուած դասակարգն է: Երևակայեցէք ձեզ մի այրի կին 4—5 երեխաներով. նա զուրկ է ապրուստի որ և է միջոցից. նա բացի ընկալած կար կարելուց ուրիշ ոչինչ չի կարող անել, թէև ուրախութեամբ նա լուացք կանէր, որովհետև լուացարարը օրը 70—80 կոպէկ է ստանում. սակայն երեխաները... ուրեմն ստիպուած նա ընկալած կար պիտի կարէ: Ո՛հ, այդ ընկալած կարը... Ահա ձեզ մի մութ, խոնաւ բնակարան. պատուհանի անաջ հասած, մէջքը կորացած մի 30—35 տարեկան կին. դա ընկալած կար կարողն է. նա առանց գլուխը բարձրացնելու շտապով կարում է ձեռքով, առանց մեքենայի, մօտենում ես նրան և հարցնում.— Տիկին, ի՞նչ էք կարում.— Բազարի կար, լինում է պատասխանը.— Ի՞նչ էք ստանում մի շապիկի համար.— Երկու և կէս կոպէկ.— օրէնք քանի՞ հատ կարող էք կարել.— Էհ, քանի՞ հատ. մինչև կէս զիշեր որ նստեմ, հարկ 8 հատ կարեմ, գոնէ մեքենայ ունենայի... իսկ եթէ մեքենայով կարէք,— մեր հարևանի կինը կարում է դարձեալ մինչև կէս զիշեր 12 հատ: Ուրեմն ձեռքով աշխատողը ստանում է օրը 20, իսկ մեքենայով աշխատողը օրը 30 կոպէկ և այդ կոպէկներն են նրանց ապրուստի միակ միջոցը:

Մտնում ես մի ուրիշ նոյնատեսակ բնակարան, յատուկի վրայ նստած, ամբողջ մարմնով կուացած մի ինչ որ բան է կարում պառաւ տանտիկինը:— Ի՞նչ ես կարում, մայրիկ,— ընկալած վերմակ.— Ի՞նչ ես ստանում մի վերմակի համար.— 7, կոպէկ.— Քանի՞ հատ կարող ես կարել օրէնք. 3—4 հատ և պառաւը ցոյց է տալիս իր մաշուած, ձեղքոտուած մասները, որ առաջացել է փոշոտ

բամբակը մաքրելուց, կամ կեղտոտ թաղիքը քրքրելուց, որ պառաւստում են նախապէս վերմակի մէջ դնելու համար.— Մի հոտիկ աղջիկս, աւելացնում է պառաւ կինը, թորախտ ստացաւ այս անտանելի թոզից և մեռաւ:

Անցնում ես միւս բնակարանները: Պատկերը նոյնն է, մի տեղ ամբողջ ընտանիքով փետուր են մաքրում, միւս տեղ կոնֆէտ են փաթաթում, սրա վարձը նոյնը, աշխատանքը՝ նոյն տաժանելի աշխատանքը: Ամեն տեղ լուռ բողոք գէպի կեղեքիչը...

Օ՛հ, այդ կեղեքիչները...

Վերոյիշեալ կարողներից մէկը պատմում էր, որ մի վաճառական իրան շարունակ կար է տալիս և իւրաքանչիւր տարի պակասեցնում է կարելավարձը. օրինակ անցեալ տարի նա վճարում էր առաջ մի շապիկին 4 կ. տարուայ վերջին 6 շապիկը 18 կ. իսկ հիմայ մի շապիկը 2½ կոպէկ:

Ահա թէ որտեղ է անծայր թշուառութիւնը:

Այս թշուառների մէջ պէտք էր գարթեցնել դասակարգային շահերի գիտակցութիւնը, պէտք էր կազմակերպել նրանց, իսկ այդ նպատակին հասնելու համար ամենից առաջ պէտք էր ի մի ժողովել ցրուած ինտելիգենտ ուժերը, որը և տեղի ունեցաւ 1906 թուի ամառը: Կանոնադրութեան նախագիծը յամենայն գէպս կազմուեց ըստ կարելոյն շափ լայն՝ ընկերութիւնը բացի «Աշխատանքի Տան» պահելուց պէտք է նպաստէր լուսաւորութեան տարածմանը չքաւոր կանանց մէջ:

Պէտք էր խնամել որբերին և այրիներին, դեղօրայք մատակարարել և այլն: 1906 թուի օգոստոսի 24-ին կանոնադրութիւնը ստացաւ պատշաճաւոր հաստատութիւնը, իսկ նոյն տարուայ նոյեմբերին պաշտօնապէս բացուեց Աշխատանքի Տունը «Մեղու» համեստ անուան տակ:

Եւ անա բոլորեց այդ ընկերութեան առաջին տարին. «Մեղուն»-ն չունէր յայտնի ինիցիատորներ, նա ժամա

նակի ծնունդ էր, և նրա բոլոր անդամներն էլ գործում էին համեստ, առանց ազմուկի և թմբուկների: Բոլորեց առաջին տարին, առատորէն պսակուեցան ընկերութեան ջանքերը՝ «Մեղուն» նուաճեց հասարակութեան ուշադրութիւնն ու համակրութիւնը:

Ճիշտ է, «Մեղուն» էլ միւս ընկերութիւնների նման առայժմ գոյութիւն ունի հասարակութեան նի թական օժանդակութեամբ, բայց ինչպէս ամեն նոր գործի սկիզբ, «Մեղուն» դրութիւնն էլ դժուար է: Հա առայժմ ենք, որ մի քանի տարիներից յետոյ արդէն «Մեղուն» հասարակական օժանդակութեան կարիք չի ունենալ այլ ևս. ոչ միայն ինքը կը պահպանէ իր գոյութիւնը սեփական աշխատանքով, այլ և կը խնայէ հասարակութեան կարողութիւնը՝ հալածելով ձրիակերութիւնը և ընդարձակելով ազնիւ աշխատաւորների շարքերը «Աշխատանքի» դրօշակի տակ:

### «ՄԵՂՈՒ» ԱՇԽՍՏԱՆՔԻ ՏԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՏՈՒԹԻՒՆԸ

#### 1. Ընդհանուր կար եւ կար ու ձեւի արհեստանոց

Կին աշխատաւորները բաժանուում են երկու կարգի՝ առաջին գասակարգը—աշխատաւորների մեծամասնութիւնը—որ կարող է միայն հասարակ կար անել, այն էլ բանուորի հագուստեղէն, իսկ երկրորդ գասակարգը՝ կարուձև սովորած օրիորդներ, որոնք ամօթխածութիւնից չեն գնում մագազինները աշխատելու և իրանք էլ անկարող են սեփական արհեստանոց բանալ:

Առաջինների համար սկզբում ընկերութիւնը գնում էր կտորներ և մշակ գասակարգի համար շապիկներ էր կարել տալիս, վճարելով իւրաքանչիւր շապիկին 6 կոպ. կարելովարձ: Բայց որովհետև ընկերութիւնը իր սուղ միջոցներով մինչև կարած շապիկների վճարելը նոր նիւ-

թեղէն աւնել չէր կարող, ստիպուած եղաւ վերցնել Ագելխանովի և միւսների կարերը, որ շատ էլ ձեռնաու չէր բանւոր գասակարգին: Ընկերութիւնս մտադէր է մի քանի կապալներ վերցնել պետական հիմնարկութիւններից և Քաղ. Վարչութիւնից, որ միջոց կը տայ մեծ թուով աշխատաւորներին գործի կանգնեցնել:

Երկրորդ տեսակի աշխատաւորների համար ընկերութիւնը բացեց սեփական կար ու ձևի արհեստանոց հմուտ վարպետուու զեկավարութեան տակ, այդ արհեստանոցը բուական բարդ աշխատանքներ է յանձն առնում նոր տարագով: Արհեստանոցը տալիս է նկատելի արդիւնք և եթէ չը հաշուենք մի քանի սկզբի անյաջող կարերը, ընդհանրապէս գոհունակութիւն է տալիս պատուիրողներին:

#### 2. Դ. պ. ը. ո. ց.

Բացի վեոյիշեալ երկու տեսակ աշխատաւորներից ընկերութեան ուշադրութիւնը գրաւեց 13—17 տարեկան օրիորդների մի խումբ, որոնք ամենահասարակ կար անգամ չէին իմանում և տարիքը կորցնելու պատճառով ոչ մի ուսումնարան չէին մտած: Սրանց համար ընկերութիւնը ստիպված էր դպրոց բանալ (բ. և գ. բաժանմունքներով) սրանց հետ ընդունելութիւն գտան և աշխատաւոր կանանց երեխաներն ևս, մեծ մասամբ որբեր: Դպրոցն անցեալ տարի 38 աշակերտուհի ունէր, բոլորն էլ արհեստաւոր և բանուոր գասակարգերից:

Ընկերութիւնը բացի ուսում տալուց (ծխ. դպրոցների ձրագրով) աշակերտուհիներին մատակարարում էր հին հագուստեղէն, իսկ տօներին կազմում էր հանդէսներ:

Առաջիկայ ուս. տարին ընկերութիւնս մտադիր է, եթէ միջոցները ներէն, աշակերտուհիներին տալ ամեն օր թէյ՝ հացով:

### 3. Կ ա զ մ ա տ ու ն .

Արհեստների բացակայութիւնը հայ կանանց մէջ չէր կարող չը գրաւել ընկերութեան ուշադրութիւնը: Իբրև փորձ, դպրոցի աշակերտուհիները սկսեցին կազմարարութեան արհեստը սովորել և ինչպէս գրամական հաշուէկշռից կարելի է տեսնել, կազմարարուհիները առաջին տարին և եթ մօտ 200 բուբու գործ կատարեցին:

«Մեղուն» կարող է պարծենալ իր այսպիսի արդիւնքով: Ափսոս միայն, որ կազմարարութեան մեքենաների թանկ արժէքը խանգարում է այս գործի յառաջադիմութեանը:

### 4. Աշխատանքի բիւրօ

Բարձր գնահատելով հանդերձ այսպիսի բիւրօի կարելութիւնը, ընկերութիւնը միջոց չ'ունեցաւ պաշտօնապէս բանալ այն, բայց գործի նախագիծը վերջանալով վրա է արդէն և եթէ հանգամանքները յաջող լինեն, բիւրօն գոյութիւն կունենայ հետեւեալ տարին:

---

Ստորև ներկայացնելով 1906—1907 տարեշրջանի հաշուէտութիւնը, «Մեղուն» հասարակութեան և մամուլի քննադատութեան է յանձնում իւր գործունէութիւնը, և ուրախ կը լինի լսել ձեռնհաս անձանց կարծիքներն ու հայեացքները իր գործունէութեան առթիւ: Օգտուելով առիթից ընկերութիւնն մի անգամ ևս շնորհակալութիւն է յայտնում այն բոլոր հաստատութիւններին և մտանաւոր անձանց, որոնք իրանց նախական օժանդակութեամբ քաջալերեցին ընկերութեանս համեստ ջանքերը:

---

Թիֆլիսի հայուհեաց «Մեղու» աշխատանքի տան  
1906 թուի նոյեմբերից մինչև  
ՄՈՒՏԲ

№№	Մ Ո Ւ Տ Բ Ի Ա Ղ Բ Ի Ի Ր Ն Ե Ր	Րուբ.	Կօպ.
1.	Անդամավճարներ 79 իսկական և 27 օժանդակ անդամներից. . . . .	502	—
2.	Նպաստ. և նուիրատու թիւներ՝ Քաղ. վարչութիւնից 150 ռ. Քաղ. վարկ՝ ընկ. 60 ռ. Միք. Միրզոյեանի ժառանգներից 150 ռ. Մն. Խունուցից 50 ռ. տ. Ս. Գասպարեանից 36 ռ. տ. Միլեանից 36 ռ. տ. Աֆրիկեանից—25 ռ. օր. Ն. Գիւլումեանից 15 ռ., նոյն օր. Գիւլումեանի միջոցով Արմաւիրում հանգանակած 279 ռ. տ. Մինասեանի միջոցով Ախալքալաքից 46 ռ., տ.—Օրդուխանեանի միջոցով Ղարաքիլիսից—35 ռ.—զանազան անձերից 35 ռ. 56 կ. իսկ ընդամենը . . . . .	917	56
3.	Ընկ. օգտին տրուած գրօսանքից, ներկայացր Ֆեերից և Աւետիս մանգալուց.	1921	73
4.	«Մեղու» Աշխատանքի տանից՝ ա. Չեռագործի արհեստան. 563—57 բ. Կազմարանից . . . . . 172—25 գ. Դպրոցից . . . . . 36—	771	82
5.	% 0/0 խնայած գումարներից. . . . .	33	04
6.	Ընկերութեան համար աւելորդ սինեակներից տան վարձ . . . . .	181	76
		4327	91

Ընկերութեան ընդհանուր ելիմտից հաշիւը  
1908 թ. յունուարի 1-ը.

ԵԼՔ

№№	Ե Լ Ք Ի Յ Օ Դ Ո Ւ Ա Մ Ն Ե Ր	Րուբ.	Կօպ.
1.	Տան վարձ . . . . .	442	50
2.	Չեռագործի արհեստանոցի նիւթեղէնի.	100	—
3.	Աշխատանքի տան ընդհ. ծախքը՝ ա. Չեռագործի արհեստանոցի վրայ . . . 372—30 բ. Դպրոցի վրայ . . . 58—40 գ. Կազմատան վրայ . . . 54—71	485	41
4.	Ռոճիկներ Աշխ. տան կառավարչուհուն, վարժուհիներին, վարպետուհուն և վարպետին, այլ և բանուորուհիներին և ծառային . . . . .	1564	43
5.	Ինվէնտար ձեռք բերելուն. . . . .	300	—
6.	Ընդհանուր մանր ծախսեր. . . . .	97	10
7.	Գրաւական է տրուած «Ժողովարանին» գրօսանքի համար այդին վարձելու 1908 զարնանը . . . . .	100	—
8.	Մտցրուած է պետական խնայողական գանձարանը № 39122 գրքոյկով . . . . .	1129	04
9.	Առ 1-ն յունվ. 1908 թ. մնացորդ ընկ. կասսայում. . . . .	109	43
		4327	91

Թիֆլիսի հայուհեաց «Մեղու» աշխատանքի  
1906 թ. նոյեմբերից մինչև

ԵԿԱՄՈՒՏ

№№	Ե Կ Ա Մ Ո Ւ Տ Ի Ա Ղ Բ Ի Ի Ր Ն Ե Ր	Րուբ.	Կօպ.
1.	Անդամավճառներից . . . . .	502	—
2.	Նպաստներից և նուիրատուութիւն- ներից . . . . .	917	56
3.	Ներկայացումներից, զբօսանքից և այլն. . . . .	1921	73
4.	Օգուտ Աշխատանքի տանից . . . . .	286	41
5.	% խնայած գումարներից . . . . .	33	04
		3660	74

տան ընկերութեան օգտի և փաստի չաշիւը  
1908 թ. յունվ. 1-ը.

ԾԱԽՔ

№№	Ծ Ա Ւ Ք Ի Յ Օ Դ Ո Ւ Ա Յ Ն Ե Ր	Րուբ.	Կօպ.
1.	Տան վարձ վճարուած է . . . . .	260	74
2.	Ռոճիկների վրայ ծախսուած է . . . . .	1564	43
3.	Մանր ծախք եղել է. . . . .	97	10
		1922	27
Առ 1 յունուարի 1908 թ. մաքուր արդիւնք մնացել է . . . . .		1738	47
		3660	74

$\frac{1004}{15494}$



Թիֆլիսի հայուհեաց «Մեղու» աշխատանքի յունուարի

ԱՆՏԻԻ

№№	Կ Ա Ր Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն	Բուբ.	Կօպ.
1.	Խնայողական գանձարանում ընկերութեան անուան № 39122 զբօսյկով պահուում է . . . . .	1129	04
2.	Առձեռն գրամ ընկ. կասսայում . . . . .	109	43
3.	Թիֆլիսի ժողովարանի աւագների մօտ կանխիկ վարձ 1908 թ. գարնան զբօսանքի համար . . . . .	100	—
4.	Ընկերութեան շարժական կայքը . . . . .	300	—
5.	Չեռագործի նիւթեղէնների մատչորդ . . . . .	100	—
<b>Բալանս</b>		<b>1738</b>	<b>47</b>

տանքի տան ընկերութեան բալանսը 1908 թուի.

ՊԱՍՍԻԻ

№№	Պ Ա Ր Տ Ք	Բուբ.	Կօպ.
1.	Ընկ. ֆօնդ կազմելու համար վարչութեան որոշմամբ յատկացրած է . . . . .	1000	—
2.	Ծախքի գումար մնում է . . . . .	738	47
<b>Բալանս</b>		<b>1738</b>	<b>47</b>

Թիֆլիսի հայուհեաց «Մեղու» Աշխատանքի  
1908 թուի

ՄՈՒՏՔ

№	Մ Ո Ւ Տ Ք Ի Ա Ղ Բ Ի Բ Ն Ե Բ	Բուր.	Կօպ.
1.	Անդամավճաններից . . . . .	500	—
2.	Նուիրատուութիւններից . . . . .	700	—
3.	Ներկայացումներից, զբօսանքից, Աւետիս ման դալուց և այլն. . . . .	1800	—
4.	Աշխատանքի տանից՝ ա. Չեռագործի ար- հեստանոցից . . . . . 600 բ. Կազմարանից . . . . . 100	700	—
5.	Կապալով վերցնելու աշխատանք- ներից . . . . .	3500	—
		<b>7200</b>	<b>—</b>

տանքի տան ընկերութեան նախահաշիւը  
համար.

ԵԼՔ

№	Ծ Ա Խ Ք Ի Յ Օ Դ Ո Ի Ա Ծ Ն Ե Բ	Բուր.	Կօպ.
1.	Բնակարանի վարձ . . . . .	600	—
2.	Վառելիք, լուսաւորութիւն, ար- հեստանոցի համար նիւթեղէններ և այլն մանր ծախքեր . . . . .	520	—
3.	Ռոճիկներ՝ Աշխ. տան կառավարչ. 400 ր. Ժամանակ. օգնականին 100 ր. Դպրոցի վարժուհուն . 300 ր. Արհեստանոցի վարպե- տուհուն . . . . . 400 ր. Կազմարար վարպետին 300 ր. Ծառային . . . . . 180 ր.	1680	—
4.	Աշխատաւոր կանանց վարձատրու- թիւն . . . . .	2400	—
5.	Ընկերութեան ֆօնդի օգտին . . . . .	2000	—
		<b>7200</b>	<b>—</b>

Վ Ա Ր Զ Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ա Զ Մ Ը

- Նախագահ՝ տ. Ս. Մինասեանց  
Անդամներ՝ տ. Ս. Զաւարեան-Յակոբեան (գանձապահ)  
տ. Հ. Թովիչեան (քարտուղար)  
տ. Ս. Դաւթեան  
տ. Ե. Աբրահամեան  
տ. Ս. Քաջագնունի  
օր. Ե. Մ. Մելքոնեան  
տ. Գ. Օհանեան  
օր. Մ. Կարա-Մուրզա

Ծանօթ. տ. Ս. Քաջագնունու քաղաքից տեղափոխվելու պատճառաւ հրաւիրուած է նրա տեղ փոխ անդամ. տ. Մ. Թևեան և օր. Եղ. Մելիք-Մելքումեանցի հրաժարուելու պատճառաւ նրա տեղ հրաւիրուել է փոխ-անդամ տ. Զ. Եղիազարեանց:



Վ Ե Ր Ա Ս Տ Ո Ւ Գ Ի Զ Յ Ա Ն Զ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի  
Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Քննութեան ենթարկելով «Մեղու» Աշխատանքի տան ընկերութեան գրամական հաշիւները 1906 թուին նոյեմբերից մինչև 1908 թուին յունուարի 1-ը հանձնաժողովս այդ հաշիւները գտաւ ճիշտ, ծախքերը փաստաթղթերով վաւերացրած և գրամական կարողութիւնը լրիւ և անվտանգ:

Յանձնաժողովս հարկաւոր է համարում խորհուրդ տալ «Մեղուի» վարչութեանը ընկերութեան ֆօնդի յատկացրած մի հազար ըւրբին զետեղել Պետական սօկոսաբեր թղթերի մէջ՝ 4% ընտայում կամ խաղարկութեան տօմսերում, ըստ իւր հայեցողութեան:

Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ  
Սօֆիա Մելիք-Շահնապարեան  
Սօֆիա Թէրզիբաշեան  
տ. Ախշարումեան

1908 թ. ապրիլ  
Թիֆլիս.

1908 թ իսկական անդամների ցանկը և նրանց  
վճարած գումարները

- Ա.
1. տ. Ափեան Աշխէն 5 ռ.
  2. տ. Աբրահամեան Եղիսարէթ 4 ռ.
  3. տ. Արեշատեան Գոճար 4 ռ.
  4. տ. Աշխարուսեան 3 ռ.
  5. տ. Ամիրզադեան Սեթենիկ 2 ռ.
  6. օր. Անտոնեան Կ. 3 ռ.
  7. օր. Աբարատեան Մարիամ 3 ռ.
  8. օր. Արեշեան Գ. 3 ռ.
  9. օր. Աղայեան Ա. 3 ռ.
  10. տ. Ասովմեան 6 ռ.
- Բ.
11. տ. Բաստուրմաճեան Վարդ. 6 ռ.
  12. տ. Բաստուրմաճեան Մար. 3 ռ.
  13. տ. Բոյաճեան Արաքսիա 5 ռ.
  14. տ. Բոճեխաթեան Աննա 5 ռ.
- Գ.
15. տ. Գասպարեան Մարրա 12 ռ.
  16. տ. Գիւլումեան (Տէր-Մկրտչեան) Նուարդ 6 ռ.
- Դ.
17. տ. Դաւթեան Սոֆիա 8 ռ.
  18. տ. Դաւթեան Հորդանս 3 ռ.
  19. տ. Դիւանեան Փեփրոնէ 3 ռ.
- Ե.
20. տ. Եղիազարեան Շ. 5 ռ.
  21. տ. Երզնկեան 6 ռ.
  22. օր. Եղիազարեան 5 ռ.
  23. տ. Եղիազարեան 10 ռ.
- Զ.
24. տ. Զաւարեան-Յակովբեան Սոփիա 6 ռ.
25. տ. Զարգարեան Նունէ 20 ռ.
- Թ.
26. տ. Թամիրեան 3 ռ.
  27. տ. Թերզիրաշեան Սոֆիա 3 ռ.
  28. տ. Թաւրիզեան 3 ռ.
  29. տ. Թեեան Մարիամ 6 ռ.
  30. տ. Թումայեան 3 ռ.
  31. տ. Թոփչեան Հրանտյո 6 ռ.
- Է.
32. տ. Լիսիցեան Կատարինէ 3 ռ.
- Ը.
33. տ. Խաչատրեան Աննա 5 ռ.
  34. տ. Խաչատրեան Եղիսարէթ 5 ռ.
  35. տ. Խոճայէյնաթեան Ա. 3 ռ.
- Կ.
36. տ. Կաֆեան Սաթենիկ 3 ռ.
  37. տ. Կարա-Մուրզա Մարիամ 3 ռ.
  38. օր. Կարա-Մուրզա Մարիամ 3 ռ.
  39. տ. Դորդանեան 3 ռ.
- Ղ.
40. տ. Հայրապետեան Օլգա 3 ռ.
- Ս.
41. Մարտիրոսեան Հայկանուշ 6 ռ.
  42. տ. Մարտիրոսեան Մար. 5 ռ.
  43. տ. Միլեան Մ. 12 ռ.
  44. տ. Մինասեան Սոֆիա 6 ռ.
  45. տ. Մուշեղեան Եղիսարէթ 9 ռ.
  46. տ. Մէլիք-Շահնազարեան Սոֆիա 3 ռ.
  47. տ. Մարգարեան Հոփսիմէ 3 ռ.
  48. օր. Միրզոյեան Աննա 3 ռ.
  49. օր. Մէլիք-Մելքունեան Եղ. 3 ռ.

- Յ.
50. տ. Յակովբեան Շուշանիկ 4 ռ.
  51. տ. Յարութիւնեան Երանուհի 3 ռ.
  52. տ. Յարութիւնեան Աննա 4 ռ. 50 կ.
  53. տ. Յովհաննիսեան Շուշան. 5 ռ.
  54. տ. Յովհաննեան Դշխուհի 3 ռ.
  55. տ. Յովհաննեան Օլգա 3 ռ.
  56. տ. Յովհաննիսեան Դարիա 3 ռ.
  57. օր. Յակովբեան Գ. 3 ռ.
- Ն.
58. տ. Նիկողայոսեան Շուշան. 3 ռ.
  59. տ. Նիկողայոսեան Վարս. 3 ռ.
  60. տ. Նալչազարեան Սաթենիկ 5 ռ.
- Շ.
61. տ. Շահպարտեան Վարդուհի 5 ռ.
  62. օր. Շահիկեան 2 ռ 25 կ.
  63. օր. Շահվէրդեան Աննա 3 ռ.
  64. տ. Շարբարչեան Եւա 4 ռ.
- Չ.
65. տ. Չիլինգարեան Գինովարէ 3 ռ.
- Ս.
66. օր. Սալինեան Սաթենիկ-3 ռ.
  67. օր. Սարգսեան 5 ռ.
  68. օր. Սերիբաիկեան Մար. 6 ռ.
  69. տ. Ստեփանեան Յլօրա 2 ռ. 50 կ.
  70. տ. Ստեփանեան Ս. 3 ռ.
- Վ.
71. տ. Վարդանեան Ամալիա 12 ռ.
  72. Վարուժեան 3 ռ.
- Տ.
73. տ. Տէր-Սահակեան 6 ռ.
  74. տ. Տէր-Ստեփանեան Սոֆիա 3 ռ.
  75. տ. Տէր-Մինասեան Մարիամ 4 ռ.
- Տ.
76. տ. Տիցիկեան Նինա 3 ռ.
- Բ.
77. տ. Բաջազունի Սաթենիկ 12 ռ.
- Օ.
78. տ. Օհանեան Գայանէ 3 ռ.
  79. տ. Օրդուխանեան 10 ռ.

Օ Ժ Ա Ն Գ Ա Կ Ա Ն Գ Ա Մ Ն Ե Ր

80. պ. Աթունեան Գ. 5 ռ.
81. պ. Աստուածատրեան Բ. 3 ռ.
82. պ. Բաղդասարեան-Բուղդանեան Ա. 3 ռ.
83. պ. Գրիգորեան Ա. 5 ռ.
84. պ. Եղիան Հ. 5 ռ.
85. տ. Եղուրեան 4 ռ.
86. պ. Եզանեան Յ. 3 ռ.
87. պ. Զաքարեան Զ. 3 ռ.
88. պ. Իստամեան Ս. 5 ռ.
89. պ. Խարազեան 5 ռ.
90. պ. Կարապետեան Գ. 5 ռ.
91. պ. Կիրակոսեան Գ. 5 ռ.
92. պ. Մարգարեան Մոս. 5 ռ.
93. պ. Մեհրաբեան Գ. 3 ռ.
94. պ. Միրզոյեան Ս. 5 ռ.
95. պ. Միրիմանեան Խ. 3 ռ.
96. պ. Մուրադեան Ա. 5 ռ.
97. պ. Նարիմանեան Զ. 5 ռ.
98. պ. Շահումեան Յ. 5 ռ.
99. պ. Ջանազեան Յակ. 5 ռ.
100. պ. Սարգսեան Կ. 10 ռ.
101. պ. Վարդանեան 3 Վ. ռ.
102. պ. Վլասեան Թ. 5 ռ.
103. պ. Տէր-Ասատուրեան 6 ռ.
104. պ. Տէր-Յարութիւնեան 5 ռ.
105. պ. Փանեան Ա. 5 ռ.
106. պ. Օհաննեան Ս. 5 ռ.



0022938

2013

5525

2001



NL0022938

